

զսպանակները ու գիտէր զանոնք ցայտուն ընծայելու գաղտնիքը: Արժանի՞ք: Բառը չէ հականը, այլ երիտասարդօրէն ծեր այդ տիպարներուն անսխալ ճշդումն է ներկայացած թնճուկէն, ինչ որ թաքուն ազդակը եղաւ անոնց: Խղճմտանքի վարդապետները միշտ յիմարներու հետ գործ չունեցան: Ատանայի եւ Պելիճիկի առաջնորդներուն - դասընկերներ- տարբերութի՞ւնը: Մաթիկը գտած էր ատիկա ու ըսաւ, այդ առիթով ծանր նախադասութիւն մը- «մեր եկեղեցին կուսակցութիւն է հիմա»: ...Չէր սխալեր այդ եկեղեցիին հետ շատ ալ գործ չունեցած յեղափոխականը: Մեր ալ քաղաքականութիւնը այդ ատեն կը դառնար անոնց փէշերով: Զօրաւոր տուրքեր չպակսեցան այդ մարդոց: Այդ տուրքերուն մէջ, մենէ դուրս աշխարհը կը դադրի իբր բառ տպաւորելէ, երբ ներկայացուի այդ գիծով օժտուածներու բերնէն ու կ'առարկայանայ լսողին ներսը:

Ծայրագոյն վարդապետը ունէր շնորհը, ձեւերը՝ կին թէ մարմար- խտացնելու եւ զգալի ընելու: Ասիկա քիչերու վիճակուած առաւելութիւն մըն է: Նիւթական մարգէն դուրս կը յօրինէ հարուստները, բարոյականէն՝ աշխարհակալները, արուեստագէտները: Անոր բառերուն մէջէն ընկեր Մաթիկը աչքովը կը շօշափէր յաւիտենական Պոլիսը, որ խոց-խոց բջջուած լեռի կը նմանի, հորիզոնը ժանեկող: Ոսկեղջիւրը, ցամաքին միտուած քմահաճ դաշոյն, որուն չէր կրնար հաւատալ ջուր կամ կապար ըլլալուն: Ու Վոսփորը, ասիերուն այլապէս սուտ, անկարելի հեքիաթովը, երբ բլուրի մը մէկ ծալքը կը բացուի յանկարծ ու պալատ մը կը սառի ջուրին եւ կանանչին ընդմէջ, այնքան անակնկալ, որ կը թուի դուրսէն դրուած ու փոխադրելի: Անոնց մարմարեայ քառափունքին սանդուխ ու նաւակ: Ու այս նաւակներուն մէջ հանրմները, որոնք կը թուին նոյնքան անիրական, երբ բեհեզին ու մետաքսին փրփուրին մէջ իրենց դէմքերը հագիւ կը բանան, խմոր ու հեքիաթ, այնքան՝ որ մարդ չի հաւատար անոնց երես ըլլալուն, ու կը կարծէ փոխ դրուած բան մը, բանուած մարմար մը՝ ոսկեգոյն կամ կապոյտ շարերուն վրայ: